Հաշվետվություն

Արկադի Պետրոսյանի՝ 2017 թվականի նոյեմբեր 9-11-ը Թուրքմենստան գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

   Արկադի Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ ԿԳՆ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Թուրքմենստան (Աշխաբադ)

   2017թ. նոյեմբեր 9-11-ը,

4. **Հրավիրող կողմը**

   Թուրքմենստանի կրթության նախարարության

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն «Կրթությունը և սպորտը երջանկության և հզորության դարաշրջանում» միջազգային գիտաժողովին:

6. **Հանդիպումներ և քննարկված հարցերը.**

   Աշխաբադում կայացած «Կրթությունը և սպորտը երջանկության և հզորության դարաշրջանում» միջազգային գիտաժողովին ՀՀ ԿԳՆ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության պետ Արկադի Պետրոսյանը հանդես է եկել զեկույցով՝ «Կրթությունը և սպորտը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

   Զեկույցի թեզիսները հրատարակվել են գիտաժողովի կազմակերպիչների կողմից:

   Թուրքմենստանի սպորտի և տուրիզմի ազգային ինստիտուտի ռեկտոր Ալլադուրդի Սարիևի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են 2014 թվականին ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի և Թուրքմենստանի սպորտի և տուրիզմի ազգային ինստիտուտի միջև կնքված պայմանագրի շրջանակներում համագործակցության խորացմանն ուղղված մի շարք հարցեր:

   Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև կրթական ոլորտի, ուսանողների, դասախոսների փոխանակման հետ կապված հարցեր: